

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ¹

Ֆինանսական շուկայի մասնակիցները 2006 թվականին

2006թ. հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկը ստանձնեց Հայաստանի ֆինանսական հատվածի կարգավորման ու վերահսկողության գործառույթը: Միասնական վերահսկողական մարմնի ստեղծման հիմնական նպատակը ֆինանսական շուկայում ընդհանուր ռիսկերի վերահսկումն էր: Ֆինանսական համակարգի զարգացումներին ընդհանրապես բնորոշ են բանկային, ապահովագրական և արժեթղթերով գործունեությունների մերձեցման միտումները, ինչը վերահսկողությունից պահանջում է համալիր ուսումնասիրել ֆինանսական շուկայի տարբեր հատվածների դրսևորումները, գնահատել դրանց բնորոշ ռիսկերը և հնարավոր ազդեցությունները ընդհանուր ֆինանսական համակարգի վրա:

ՀՀ ֆինանսական շուկայի կարևորագույն մասնակիցները առևտրային բանկերն են, որոնց ակտիվների մեծությունը 2006թ. երրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել է ֆինանսական համակարգի համընդհանուր ակտիվների մեծության մոտ 95%-ը: 2006թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգում շարունակվել են նախկինում ձևավորված զարգացման միտումները: Տարվա ընթացքում բանկային համակարգն ապահովել է ընդհանուր ակտիվների, պարտավորությունների և կապիտալի մեծությունների աճ:

ՀՀ բանկային համակարգը 2006 թվականին

Տարվա ընթացքում բանկային համակարգում տեղի են ունեցել ակտիվների և պարտավորությունների արժույթային կառուցվածքի էական փոփոխություններ: 2006թ. առաջին տասնմեկ ամիսներին դրամային ակտիվներն ու պարտավորությունները աճել են համապատասխանաբար 34%-ով և 41%-ով, իսկ արտարժույթային ակտիվներն ու պարտավորությունները՝ համապատասխանաբար 3%-ով և 4%-ով: Արդյունքում՝ բանկային համակարգի ակտիվների կազմում դրամային ակտիվների տեսակարար կշիռը ավելացել է 7 տոկոսային կետով և 30.11.2006թ. դրությամբ կազմել ընդհանուրի 54%-ը (առաջին անգամ դրամային ակտիվների ծավալը գերազանցել է արտարժույթային ակտիվների ծավալը): Դրամային պարտավորությունների տեսակարար կշիռը ավելացել է 8 տոկոսային կետով և կազմել ընդհանուր պարտավորությունների 41%-ը:

2006թ. նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր՝ 297 մասնաճյուղերով: Տարվա ընթացքում մեկ բանկի կանոնադրական հիմնադրամում խոշոր փայամասնակցություն է ձեռք բերել ֆրանսիական Կրեդիտ Ագրիկոլ բանկը և մեկ այլ բանկում՝ ուկրաինական Ուկրպրոմբանկը:

2006 թվականի տասնմեկ ամիսների ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 16.1%-ով կամ 55.8 մլրդ դրամով և նոյեմբերի վերջին կազմել 401.8 մլրդ դրամ: Դրան նպաստել է ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների, բանկերի (ներառյալ ՀՀ ԿԲ), այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների, ինչպես նաև այլ պարտավորությունների (մասնավորապես՝ բանկի կողմից թողարկված տոկոսային արժեթղթեր, տարանցիկ հաշիվներ, ակրեդիտիվների գծով հաշվարկային պարտավորություններ և այլ հաշիվներ) աճը:

¹ Բանկային համակարգի ներգրավված ավանդների և տեղաբաշխված վարկերի վերաբերյալ ցուցանիշները կարող են չհամընկնել ծրագրի այլ բաժիններում ներկայացված ցուցանիշներին, քանի որ այստեղ ներառված են ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների միջոցները, մինչդեռ այլ բաժիններում՝ միայն ռեզիդենտների միջոցները:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց համախառն ավանդները աճել են 14.1%-ով (36.9 մլրդ դրամով): Դրամային ավանդներն ավելացել են 32.9 մլրդ դրամով, արտարժույթային ավանդները՝ 4.0 մլրդ դրամով:

Կանխատեսվում է, որ 2006թ. բանկային համակարգի պարտավորությունները կկազմեն մոտ 399.0 մլրդ դրամ:

2006թ. տասնմեկ ամիսների ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալի աճի տեմպը գերազանցել է պարտավորությունների և ակտիվների աճի տեմպերը՝ նպաստելով «կապիտալ / ակտիվներ» հարաբերակցության 1.2 տոկոսային կետով ավելացմանը: Ընդհանուր կապիտալն ավելացել է 24%-ով կամ 23.0 մլրդ դրամով և 30.11.06 դրությամբ կազմել 117.8 մլրդ դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում կանոնադրական հիմնադրամ են համալրել 9 բանկեր: Բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամը ավելացել է 19.4 մլրդ դրամով, որից 17.4 մլրդ դրամը բաժին է ընկնում երկու բանկի: Հատկանշական է, որ նշված երկու բանկերից մեկ բանկի կանոնադրական հիմնադրամը համալրվել է նոր փայմասնակցի կողմից միջոցների ներդրման, իսկ մյուսինը՝ նախորդ ժամանակաշրջանի շահույթից տարվա ընթացքում բաշխված 4.3 մլրդ դրամի չափով շահաբաժինները ամբողջովին կանոնադրական հիմնադրամ ուղղելու արդյունքում: Բացի վերոնշյալ բանկից, շահաբաժիններ են բաշխել նաև 6 բանկեր՝ ընդհանուր 2.6 մլրդ դրամի չափով:

Տարվա տասնմեկ ամիսների ընթացքում համակարգն ապահովել է 15.0 մլրդ դրամի շահույթ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի շահույթի մեծություները գերազանցել է 29.6%-ով: Նախորդ տարվա համեմատ բանկային համակարգի շահույթի բարձր մակարդակը հիմնականում պայմանավորվել է տնտեսությանը տրամադրված վարկերի արագատեմպ աճի պայմաններում զուտ տոկոսային եկամուտների աճով:

Կանխատեսվում է, որ 2006 թվականը բանկային համակարգը կավարտի 119.5 մլրդ դրամ ընդհանուր կապիտալի մեծությամբ:

2006թ. տասնմեկ ամիսների ընթացքում բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն ավելացել են 17.9%-ով կամ 78.8 մլրդ դրամով, որի 54.1%-ը բանկային համակարգը նախընտրել է ներդնել տնտեսությանը տրամադրվող վարկերում: 30.11.06 դրությամբ բանկային համակարգի ակտիվների մեծություները կազմել է 519.5 մլրդ դրամ: Տնտեսությանը տրամադրված վարկերի աճի տեմպը գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը՝ կազմելով 23.2%: Ֆիզիկական անձանց վարկավորումն ավելացել է 38.4%-ով կամ 28.3 մլրդ դրամով, իրավաբանական անձանց վարկավորումը՝ 13.5%-ով կամ 14.0 մլրդ դրամով:

Տարվա հատկանշական դրսևորումներից է եղել նաև խոշորագույն բանկերից մեկում զուտ արտաքին ակտիվների (մասնավորապես՝ օտարերկրյա բանկերում նոստրո թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ) կտրուկ նվազումը՝ պայմանավորված միջոցների՝ ներքին տնտեսության վարկավորմանն ուղղված հոսքերով:

2006թ. բավականին բարձր է եղել հիփոթեքային (104%-ով) վարկերի աճը: Զգալի ավելացել են սպառողական վարկերը, ինչպես նաև առևտրի և սննդի արդյունաբերության ճյուղերին հատկացված վարկերը: Վարկային ներդրումների սեզոնայնությունն ըստ ճյուղերի, նախորդ տարվա համեմատ, գրեթե նույնն է մնացել:

Կանխատեսվում է, որ 2006թ. վերջի դրությամբ բանկային համակարգի ակտիվների մեծությունը կկազմի 518.5 մլրդ դրամ, իսկ վարկերի մեծությունը՝ 233.0 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունները 2006 թվականին

2006թ. ընթացքում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա է ստացել յոթ ընկերություն՝ «Ֆինքա», «Նորվիկ», «Գառնի Ինվեստ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ները և «Արեգակ», «Նոր Հորիզոն», «Մալաթիա», «Էկոմենիկ Եկեղեցական Փոխատվական Ֆոնդ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ները: Ներկայումս ՀՀ տարածքում գործում են 17 վարկային կազմակերպություններ (12 մասնաճյուղերով):

2006թ. առաջին տասնմեկ ամիսների ընթացքում վարկային կազմակերպությունների պարտավորություններն² ավելացել են 191%-ով և կազմել 10.1 մլրդ դրամ: 30.11.06 դրությամբ ընդհանուր պարտավորությունների 20%-ը բաժին է ընկել այլ ֆինանսական կազմակերպությունների (ոչ բանկ) նկատմամբ պարտավորություններին: Իրավաբանական և ֆիզիկական անձանցից փոխառությունները կազմել են ընդհանուր պարտավորությունների 50%-ը, ընդ որում՝ 5.0 մլրդ դրամ փոխառությունների 87%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց, իսկ 13%-ը՝ ֆիզիկական անձանց:

2006թ. հունվար-նոյեմբերին վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալն ավելացել է 75%-ով և կազմել 7.7 մլրդ դրամ: Աճը հիմնականում տեղի է ունեցել վարկային կազմակերպության գործունեության լիցենզիա ստացած յոթ նոր և արդեն գործող ևս չորս վարկային կազմակերպությունների կողմից կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին: Վարկային կազմակերպությունների չբաշխված շահույթը կազմել է 150 մլն դրամ:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվներն ավելացել են 126%-ով և կազմել 17.8 մլրդ դրամ կամ բանկային համակարգի ակտիվների 3.4%-ը: Ակտիվների կազմում հիմնականում ավելացել են ֆիզիկական անձանց վարկերը: Վարկային ներդրումներում զգալի ավելացել են առևտրի (2.9 մլրդ դրամով) և գյուղատնտեսության վարկերը (1.6 մլրդ դրամով):

Ապահովագրական շուկան 2006 թվականին

2006թ. հունվար-սեպտեմբերին դադարեցվել է ութ ապահովագրական ընկերությունների՝ «Ավուար», «Էրմեդ» ապահովագրական ՓԲԸ-ների, «Երաշխիք», «Ինօրիենթ», «Գոբա», «Ռենեսանս Ինշուրանս», «Սամգաս» և «Հ և Ֆ» ապահովագրական ՍՊԸ-ների լիցենզիաների գործողությունը: Ներկայումս ՀՀ տարածքում լիցենզավորված ապահովագրական ընկերությունների թիվը 15 է:

Ապահովագրական բրոքերային ընկերությունները 7-ն են, որից մեկի գործունեության լիցենզիան կասեցված է (ապահովագրական բրոքերային ընկերությունների ակտիվների մեծությունը 30.09.06թ. դրությամբ կազմել է 200 մլն դրամ, իսկ սեփական կապիտալի մեծությունը՝ 69 մլն դրամ):

Ապահովագրական ընկերությունների պարտավորությունները³ նվազել են 36%-ով և կազմել 3.5 մլրդ դրամ: Նվազումը պայմանավորվել է ապահովագրական պահուստների ընդհանուր մեծության 2.4 մլրդ դրամ նվազումով՝ հիմնականում վնասների պահուստի 1.6 մլրդ դրամ նվազման հաշվին:

Ապահովագրական ընկերությունների կապիտալն ավելացել է 29%-ով և կազմել 5.7 մլրդ դրամ: Աճը հիմնականում պայմանավորվել է ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալի ընդհանուր մեծության 1.1 մլրդ դրամ ավելացումով: Կանոնադրական կապիտալի աճին էապես նպաստել է կանոնադրական կապիտալի նկատմամբ նվազագույն սահմանաչափի պահանջը, ըստ որի՝ 2007 թվականի հունվարի 1-ից այն պետք է կազմի 350 մլն դրամ, իսկ 2008 թվականի հունվարի 1-ից՝ 500 մլն դրամ: Ապահովագրական ընկերությունների զուտ շահույթը կազմել է 360 մլն դրամ:

Ապահովագրական ընկերությունների ակտիվները նվազել են 7%-ով և կազմել 9.2 մլրդ դրամ: Հավաքագրված ապահովագրավճարների մեծությունը կազմել է 5.1 մլրդ դրամ, որից մոտ 3.3 մլրդ դրամը փոխանցվել է վերաապահովագրողներին: Ապահովագրական հատուցումների մեծությունը կազմել է 27.1 մլրդ դրամ, որից 26.9 մլրդ դրամը՝ վերաապահովագրողների բաժինն է:

² Վարկային կազմակերպությունների գործունեության վերլուծությունը կատարվել է 31.12.2005թ. դրությամբ գործող 10 և 30.09.2006թ. դրությամբ գործող 15 վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշների համեմատության հիման վրա:

³ Ապահովագրական ընկերությունների գործունեության վերլուծությունը կատարվել է 31.12.2005թ. դրությամբ գործող 23 և 30.09.2006թ. դրությամբ գործող 17 ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշների համեմատության հիման վրա:

Արժեթղթերի շուկան 2006 թվականին

Տարվա ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող ընկերությունների թիվը ավելացել է ևս երկուսով. բրոքերային գործունեության լիցենզիա է ստացել «Թամրազյան և ընկերներ» բրոքերային ՍՊԸ-ն, բրոքերային և հավատարմագրային գործունեությունների լիցենզիաներ է ստացել «Իկապիտալ Ասեթ Մենեջմենտ» ՓԲԸ-ն: Ներկայումս ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն են իրականացնում 20 ընկերություններ: Ընդ որում՝ դրանցից 7-ը, բացի բրոքերային գործունեության լիցենզիայից, ունեն նաև հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա, իսկ 1-ը ունի նաև պահառուի լիցենզիա:

Վերոնշյալ ընկերությունների ընդհանուր ակտիվների ծավալը 30.09.06 դրությամբ կազմել է 10.5 մլրդ դրամ: Արժեթղթերի շուկայի բրոքերների/դիլերների գործունեության շրջանակներում իրականացված գործարքների շրջանառության ծավալները ինն ամիսների ընթացքում կազմել են 143.4 մլրդ դրամ, որի 98%-ը բաժին է ընկել պետական պարտատոմսերով (ներառյալ ռեպո գործառնությունները) կատարված գործարքներին:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի մարտի 1-ի թիվ 85 Ն որոշմամբ, «Արժեթղթերի շուկայի կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված հաշվետու թողարկող որակելու նպատակով «զուտ ակտիվների» մեծության չափը սահմանվել է 500 հազար դրամ՝ նախկին 50 հազար դրամի փոխարեն:

30.09.2006 թ. դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողության դաշտում գործում է թվով 36 հաշվետու թողարկող, որոնց զուտ ակտիվների և բաժնետերերի քանակը կազմել է համապատասխանաբար 85.3 մլրդ դրամ և 28914 անձ:

ՀՀ ֆինանսական շուկայում գործունեություն են ծավալում նաև «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ինքնակարգավորվող կազմակերպությունը» և արտարժույթի և արժեթղթերի առք/վաճառքի սակարկություններ կազմակերպող «Հայաստանի ֆոնդային բորսա ինքնակարգավորվող կազմակերպությունը»: Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացված գործարքների շրջանառության ծավալները ինն ամիսների ընթացքում կազմել են 2.6 մլրդ դրամ:

Ֆինանսական շուկայի այլ մասնակիցները 2006 թվականին

2006թ. ընթացքում ուժը կորցրած է ճանաչվել թվով յոթ գրավատների գործունեության լիցենզիան, և գրավատան գործունեության լիցենզիա է տրամադրվել թվով տասը ընկերությունների: 30.09.2006թ. դրությամբ ՀՀ-ում գործող գրավատների քանակը կազմել է 64, որոնց կողմից տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը կազմել է 1.7 մլրդ դրամ, իսկ ընդհանուր ակտիվների ծավալը՝ 1.8 մլրդ դրամ:

Տարեսկզբին ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառք իրականացնելու լիցենզիա են ունեցել 376 փոխանակման կետեր (ներառյալ մասնաճյուղերը), իսկ ներկայումս՝ 270: Տարվա ընթացքում թվով 147 արտարժույթի փոխանակման կետերի լիցենզիաները ուժը կորցրած են ճանաչվել (որից 21-ը՝ իրենց դիմումների համաձայն), և արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա է տրվել թվով 41 արտարժույթի փոխանակման կետերի:

Տարվա ընթացքում արժույթային դիլերի գործունեության լիցենզիա է տրամադրվել «Արման Գազպա» ՍՊԸ-ին: ՀՀ տարածքում արժույթային դիլերի գործունեության լիցենզիա է տրամադրված 7 իրավաբանական անձանց:

ՀՀ ֆինանսական շուկայում գործում է դրամական փոխանցումներ իրականացնող երկու ընկերություն՝ «Հայփոստ» ՓԲԸ-ն և «Արմենիան Էքսպրես» ՓԲԸ-ն, ինչպես նաև վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող մեկ կազմակերպություն՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն (վերջինիս ակտիվների ծավալը 30.09.06 դրությամբ կազմել է 1.1 մլրդ դրամ):

Բանկային համակարգի զարգացումների կանխատեսումը 2007 թվականին

Բանկային համակարգում 2007թ. կշարունակվեն վերջին տարիների զարգացումները. կարճաճաճողի կապիտալի, պարտավորությունների և ակտիվների աճ: Ըստ կանխատեսումների՝ 2007թ. վարկային ներդրումները, ընդհանուր ակտիվների համեմատությամբ, դարձյալ կապահովեն առաջանցիկ աճի տեմպ:

2007թ. կանխատեսվում⁴ է բանկային համակարգի ընդհանուր կապիտալի մոտ 25%-ով աճ (31 մլրդ դրամով):

2007թ. բանկային համակարգի շահույթի մեծությունը 25%-ով կգերազանցի չբաշխված շահույթի մեծությունը՝ կազմելով մոտ 20 մլրդ դրամ: Շահույթի աճը հիմնականում կապամանավորվի վարկային ներդրումներից տոկոսային եկամտի աճով:

2007թ. ակնկալվում է բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների 10%-ով աճ (38 մլրդ դրամով):

Աճը հիմնականում կապամանավորվի ավանդների մոտ 10% կանխատեսվող աճով (30 մլրդ դրամով), ընդ որում՝ գերազանցապես ռեզիդենտների ավանդների աճի արդյունքում: Որպես ավանդների աճի գնահատման հիմնական գործոններ են դիտվել վերջին ժամանակաշրջանում առանձին բանկերում ավանդների աճի, ազգաբնակչության եկամուտների աճի, ժամկետային ավանդների տոկոսադրույքների միտումները, բանկերի կողմից ավանդների նկատմամբ դրսևորվող պահանջարկը, ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգի նկատմամբ բնակչության զգայունության աստիճանը և այլն: Ընդհանուր պարտավորությունների աճին որոշակի կնպաստի նաև միջազգային տարբեր ծրագրերի շրջանակներում 2007թ. բանկերին տրամադրվելիք գումարների և այլ ոչ ավանդային ռեսուրսների ծավալների աճը:

2007թ. կանխատեսվում է բանկային համակարգի ընդհանուր ակտիվների 13% աճ (69 մլրդ դրամով):

Բանկային համակարգի ակտիվների աճի կանխատեսումը պարտավորությունների և կապիտալի ակնկալվող աճի արդյունք է: Ակտիվների ավելացված միջոցների մոտ 70%-ը կանխատեսվում է, որ կտեղաբաշխվի վարկային ներդրումներում և 10%-ը կներդրվի պետական արժեթղթերում: Արդյունքում՝ 2007թ. վարկային ներդրումների աճը կկազմի 20% (49 մլրդ դրամ), իսկ պետական պարտատոմսերում ներդրումների աճը՝ 8% (7 մլրդ դրամ):

2007 թվականին ՀՀ ԿԲ կողմից իրականացվելիք միջոցառումները

ՀՀ ֆինանսական համակարգում առողջ մրցակցային միջավայրի ամրապնդման, իրացվելիության ու կայունության ապահովման և ֆինանսական միջնորդության դերի բարձրացման նպատակով Կենտրոնական բանկը նախատեսում է 2007 թվականին իրականացնել մի շարք միջոցառումներ:

2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկն էապես վերանայելու և ներդնելու է նոր վերահսկողական համակարգ: Վերջինս ենթադրում է ֆինանսական համակարգի ինստիտուտների (բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, արժեթղթերի

⁴ Այս բաժնում կատարված կանխատեսումների համար հիմք են հանդիսացել.

- առևտրային բանկերի կողմից ներկայացված ռազմավարական ծրագրերը, դրանց ամփոփման և վերլուծության հիման վրա տրված փորձագիտական գնահատումները,
- վերջին տարիներին բանկային համակարգում դրսևորված և արդեն ձևավորված միտումները,
- 2006թ. բանկային համակարգի առանձնահատկությունները, 2007թ. այդ առանձնահատկությունների պահպանման և նորերի ի հայտ գալու հավանականությունները,
- 2007թ. տնտեսության իրական հատվածի կանխատեսվող զարգացումների ազդեցությունը ՀՀ բանկային համակարգի ամփոփ ցուցանիշների վրա:

շուկայի մասնագիտացված անձինք) վրա հիմնված վերահսկողության մոդելից անցում ֆունկցիոնալ կարգավորման/վերահսկողության մոդելի: Մասնավորապես՝ հստակ տարանջատվելու են կանխարգելիչ (prudential) և շուկայի արդարության ապահովման (market conduct) ու ֆինանսական համակարգի սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված կարգավորման/վերահսկողության գործառույթները: Ընդ որում՝ նախատեսվում է մշակել սպառողների շահերի պաշտպանության միջոցառումների հստակ ծրագիր, որը նպաստելու է ֆինանսական շուկայի նկատմամբ վստահության և ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացմանը:

ՀՀ կենտրոնական բանկը մեծ ուշադրություն է դարձնելու նաև սպառողների տարբեր հատվածների համար ֆինանսական ծառայությունների հասանելիությանը և որակի ապահովմանը: Այդ չափանիշները գնահատելու նպատակով մշակվելու է վարկանիշների ձևավորման մեթոդաբանություն: Գնահատման արդյունքների հիման վրա ֆինանսական կազմակերպություններին շնորհվելու են վարկանիշներ, որոնք էլ պարբերաբար հրապարակվելու են:

Կապված 2007թ. ֆինանսական համակարգի վերահսկողության մոտեցումներում կառուցվածքային փոփոխությունների հետ, նախատեսվում են ՀՀ կենտրոնական բանկի վերահսկողական գործառույթը կարգավորող ակտերի վերանայում, համապատասխան փոփոխությունների կատարում, նոր ակտերի մշակում:

Արժեթղթերի շուկայի զարգացման առումով կարևորվելու է մի շարք միջոցառումների իրականացումը, որոնք նպաստելու են արժեթղթերի շուկայից օգտվողների թվի ավելացման ռազմավարությանը:

ՀՀ կենտրոնական բանկը շարունակելու է շվեդական բորսայի օպերատոր Օ-Էմ-Էքս-ի (OMX) հետ Հայաստանի արժեթղթերի շուկայի զարգացման հեռանկարների ուսումնասիրության և զարգացման առաջարկությունների ծրագրի իրականացումը:

Ամփոփվելու են «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքները: Նոր օրենքի ընդունումը պայմանավորված է կարգավորման դաշտը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, ինչպես նաև արժեթղթերի շուկայի զարգացմանը նպաստող քաղաքականության իրականացմամբ:

Կենտրոնական բանկի արժեթղթերի շուկայի զարգացման հայեցակարգով նախատեսված են մի շարք այլ միջոցառումներ. պոտենցիալ թողարկողների հետ ակտիվ աշխատանքների շարունակում, բորսայի և Կենտրոնական դեպոզիտարիայի կարգավիճակի փոփոխություն՝ ինքնակարգավորվող կազմակերպությունից՝ առևտրային, արժեթղթերի շուկա բանկերի մուտքի թույլատրում:

Արժեթղթերի շուկան կարգավորող ենթաօրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով 2007թ. նախատեսվել են բանկերի և վարկային կազմակերպությունների՝ ուղղակիորեն արժեթղթերի շուկա մուտքի ապահովմանը, երկմակարդակ պահառության համակարգի ձևավորմանը, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց նկատմամբ տնտեսական նորմատիվների սահմանմանը, արժեթղթերի ազդագրում ներառվող տեղեկատվության կազմի (ըստ այդմ՝ նաև հաշվետու թողարկողների հաշվետվությունների) վերանայմանը և մի շարք այլ խնդիրներին վերաբերող փոփոխություններ: Միևնույն ժամանակ, ԿԲ-ն նախատեսում է աջակցել հրապարակային առաջարկի միջոցով արժեթղթերի թողարկումներ իրականացնողներին:

Ապահովագրական ոլորտում շարունակվելու են 2006թ. սկսված աշխատանքները՝ ըստ Հայաստանում ապահովագրական շուկայի զարգացման և վերահսկողության բարեփոխումների հայեցակարգի: Վերջինս նախատեսում է մի կողմից՝ ՀՀ ապահովագրական ոլորտի օրենսդրության համապատասխանեցում եվրոպական և Ապահովագրողների վերահսկող մարմինների միջազգային ասոցիացիայի կողմից մշակված չափանիշներին, մյուս կողմից, ապահովագրական շուկայի բնականոն գործունեության համար անհրաժեշտ ինստիտուտների՝ ակտուարների, ապահովագրական դեպքերի գրանցման և գնահատման ենթակառուցվածքների ներդրում և, դրան զուգահեռ, համարժեք վերահսկողության և կարգավորման դաշտի ձևավորում:

2007թ. ընթացքում ՀՀ կառավարությանն է ներկայացվելու «Ապահովագրության մասին օրենքի» նոր նախագիծ, որում լուծումներ կտրվեն մի շարք խնդիրների, որոնք հստակ չեն կարգավորվում կամ ընդհանրապես ներառված չեն «Ապահովագրության մասին» ՀՀ գործող օրենքում: Մասնավորապես՝ կարգավորման և վերահսկողության տեսանկյունից անհրաժեշտ է կատարել ապահովագրության դասակարգում ըստ ապահովագրության տեսակների, դասերի և ենթադասերի, տարանջատել կյանքի և ոչ կյանքի ապահովագրությունները, ներդնել ապահովագրական ընկերությունների կորպորատիվ կառավարման սկզբունքները, սահմանել օտարերկրյա ապահովագրական ընկերությունների գործունեության ռեժիմ, հստակեցնել ապահովագրական միջնորդների գործունեությունը կանոնակարգող դրույթները, ներմուծել ապահովագրական գաղտնիքի գաղափարը, սահմանել ապահովագրական ընկերությունների լուծարման կարգը, ինչպես նաև պատժամիջոցների սահմանման և ապահովագրական ընկերությունների վերակազմակերպման նոր մոտեցումներ:

2007թ. նախատեսվում է շարունակել ապահովագրական շուկայի արդյունավետ գործունեությունը ապահովող ենթակառուցվածքների ներդրման աշխատանքները, որոնք անհրաժեշտ նախապայման են նաև պարտադիր ապահովագրության ներդրման համար: 2006թ. արդեն մշակվել են հետևյալ չորս նախագծերը:

Ապահովագրության ոլորտում ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքերի գրանցման նախագիծը նպատակ ունի սահմանելու հստակ ու արդյունավետ ընթացակարգեր, որոնք կբարձրացնեն ապահովագրողների վստահությունը համակարգի նկատմամբ:

Ապահովագրական վիճակագրական կենտրոնի ստեղծումը կնպաստի ապահովագրական ռիսկերի գնահատման և կառավարման, սակագների սահմանման համար վստահելի տվյալների բազայի ստեղծմանը:

Ակտուարների կառույցի նախագծի նպատակն է ձևավորել, կրթել և զարգացնել ակտուարական մասնագիտությունը Հայաստանում:

Գնահատողների կառույցի ներդրումը կձևավորի ապահովագրական ռիսկերի գնահատման և պատճառված վնասի փոխհատուցման հիմնավորված գին:

Ապահովագրության ոլորտի զարգացման հիմնական ուղղություններից կշարունակի լինել նաև ապահովագրական դաշտի կարգավորման և վերահսկողության դաշտի ձևավորումը: 2006թ. Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատել է մի շարք նորմատիվային ակտեր, որոնք ուժի մեջ կմտնեն 2007թ., դրանք են՝ նոր հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը, նոր նորմատիվային և պահուստների ձևավորման կանոնակարգերը, ապահովագրական սակագների հիմնավորման կարգը, ապահովագրողների կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ներկայացման և լրացման կարգը, ապահովագրողների կողմից հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները: 2007թ. ընթացքում վերանայվելու են ապահովագրական գործակալների գործունեության օրինակելի կանոնակարգի, ինչպես նաև ապահովագրական բրոքերների կողմից վերահսկողական նպատակներով ԿԲ ներկայացվող հաշվետվությունների նկատմամբ պահանջները: 2007թ. առաջնահերթ խնդիրներից են լինելու ապահովագրական ընկերությունների ֆինանսական վիճակի վատթարացման վաղ ահազանգման գործիքների մշակումը և ստուգումների իրականացման ձեռնարկների ստեղծումը: Օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի փոփոխություններին համահունչ՝ վերանայվելու են ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների որակավորման ստուգման տեստերը: ՀՀ ապահովագրական ընկերությունների և միջնորդների գործունեության կարգավորման և վերահսկողության դաշտը կհամապատասխանեցվի եվրոպական և Ապահովագրողների վերահսկող մարմինների միջազգային ասոցիացիայի (IAIS) կողմից ընդունված ստանդարտներին:

2007թ-ին ՀՀ կենտրոնական բանկի կողմից կմշակվի «Ֆինանսական կոնգլոմերատների մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրա հիման վրա՝ դաշտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը:

Բանկային արդյունավետ վերահսկողության կատարելագործման, վերահսկողության որակի բարձրացման նպատակով նախատեսվում է Կենտրոնական բանկի կողմից մի շարք միջոցառումների իրականացում: Մասնավորապես՝

- կադրերի որակավորման բարձրացման նպատակով՝ լրացուցիչ պահանջների, ստանդարտների մշակում և ներդրում,
- վերահսկողական աշխատանքների արդյունավետության գնահատման նոր սկզբունքների ներդրում:

2006թ. բանկերի ղեկավարների և աշխատակիցների համար կազմակերպվել են ԲԱՁԵԼ II համաձայնագրին վերաբերող դասընթացներ, ձևավորվել է աշխատանքային խումբ՝ կազմված բանկերի և Կենտրոնական բանկի ներկայացուցիչներից՝ համաձայնագրի ներդրման աշխատանքների կոորդինացման նպատակով: Միաժամանակ, մշակվել են համապատասխան փոփոխությունների նախագծեր՝ կապված ԲԱՁԵԼ II համաձայնագրի առաջին մասի ստանդարտացված մոտեցման (ռիսկի կշիռների վերանայում, շուկայական ռիսկի՝ կապիտալի համարժեքության հաշվարկում ընդգրկում), գործառնական ռիսկի գնահատման մեթոդաբանության ներդրման հետ: Նախատեսվում է, որ վերոնշյալ նորմատիվային փոփոխությունները ուժի մեջ կմտնեն 2007 թվականին:

2006թ. ՀՀ տնտեսությունում ձևավորվել է երկարաժամկետ վարկերի նկատմամբ պահանջարկի բարձր մակարդակ: 2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկը կիրականացնի հիփոթեքային վարկավորման զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ կշարունակվեն Գերմանական զարգացման բանկի (KfW) հետ համատեղ Կենտրոնական բանկի աշխատանքները. 2007թ. ընթացքում Գերմանական զարգացման բանկը հիփոթեքային վարկավորման շուկայի զարգացման ծրագրի շրջանակներում ընտրված գործընկեր բանկերին և վարկային կազմակերպություններին կվերաֆինանսավորի 12 մլն եվրո գումարի չափով:

2007 թվականին ՀՀ կենտրոնական բանկը նախատեսում է ակտիվորեն մասնակցել հիփոթեքային երկրորդային շուկայի զարգացման աշխատանքներին: Մասնավորապես՝ կմշակվի «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այս օրենքի ընդունումը կարևորվում է այն տեսանկյունից, որ հնարավորություն կտա բանկերին և վարկային կազմակերպություններին հիփոթեքային վարկերի ֆինանսավորման համար թողարկել հիփոթեքային արժեթղթեր և միջոցներ ներգրավել կապիտալի շուկայից: Մյուս կողմից՝ հիփոթեքային արժեթղթերը ներդրողների համար որպես այլընտրանքային գործիք կծառայեն:

ՀՀ կենտրոնական բանկը 2007 թվականին կշարունակի ակտիվ մասնակցությունը կենսաթոշակային համակարգի բարեփոխումների հետ կապված աշխատանքներին:

Բարեփոխված համակարգի ներդրման նպատակը կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացումն է և դրա արդյունքում՝ ֆինանսական համակարգի հետագա ընդլայնումն ու զարգացումը՝ ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացման, տնտեսությունում երկարաժամկետ միջոցների ձևավորման միջոցով:

ՀՀ կենտրոնական բանկի «Ֆինանսական համակարգի կայունության ապահովման կառուցվածքի հայեցակարգի» ներքո 2007 թվականին կշարունակվեն ֆինանսական համակարգի մասնակիցների գործունեությունից առաջացող ռիսկերի, ներքին և արտաքին տնտեսություններից բխող ռիսկերի բացահայտման և համալիր ուսումնասիրության, ինչպես նաև ֆինանսական կայունության տեսանկյունից դրանց ազդեցության մակարդակի գնահատման աշխատանքները: Ֆինանսական համակարգի գործունեության կայունության ապահովման նպատակով 2007թ. Կենտրոնական բանկը կշարունակի բանկային, ապահովագրական, արժեթղթերի շուկաների, ինչպես նաև ֆինանսական համակարգի այլ մասնակիցների վերահսկողության և կարգավորման աշխատանքները: